ԿԱԼԻ ԵՐԳԵՐ

Էշթանք հարման,
Մալին ալաման
Լձինք թաշքան
Մեշը յանգան,
Դագը կոտկան,
Էդևեն խաշխան,
Բզդի կոտկան,
Տեղին առփան,
Ջալան ու քուլթան,
Թեմիզ, թամամ,
Գալսինք համան։

Սալման ու բերեք,
Ջանգան գերեք,
Ուժ թոփ արեք,
Գորձի ելեք։
Քուլթան ու չալան
Վալկան ու կոպնան,
Սենեքներուդ վրան
Վազելեն թո՛ կան։
Դունի բես արբան,
Շիդագ գեր հարման.
Կապնայի չուվալ
Ամոթ է ստանալ։
Ցորենը, առփան
Գուդե գեղին քիրան,
Խաուզը, խրջին
Գրմնան խեղջին։

Խաուզը գուգինք,
Խրջին գրձախինք,
Էշտը, բլովը
Գուդե մեր կովը։
Դեղերուն քիրան
Վիզերուա վրան,
Ինքերս մոլոր,
Քաղցած ու դգլոր,
Ցսիր քաղաքին,
Կպանինք սաղ դարին։

Քաղաքի չալովը մենք վարեցինք,
Բային Էղիային զենգընցուցինք։
Մեր եզերուն վիզը յարա,
Գրոնագները միս չըկա։
Խրոթիշը մենք զըրշեցինք,
Դեղին քիրան աշ բոլ կեկ գվինք,
Եղիա աղային շեբը ձիք-ձիք
Մեր ստագովը իլինքցուցինք։

1910 թվականին Նոր Նախիջևանի դուման որոշեց հերկել իր երբեք չվարված կուսական խոտատեղիները։ Նրանց հերկելը շատ ծանր գործ էր։ Քաղաքը ձեռնտու պայմաններով տվեց կապալառու Բայանին, որը այդ կատարեց գյուղացիների ձեռքով և քաղեց մեծ օգուտ։ Այդ առթիվ հորինված է եղել երգ, որի առաջին մասն են կազմում այս մեջ բերված տողերը։ Ամբողջ երգը գիտցողներ չգտանք։